ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«16» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000091

Ձեռնարկողը՝ ***«ՎԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ***
ք. Երևան, Լենինգրադյան հ.23/2 և հ.23/10

Գործունեությունը՝ ***Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան հ.23/2 և հ.23/10 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000091

<<26>> 10 2020թ.

Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջան, Լենինգրադյան հ.23/2 և հ.23/10 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՎԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Ըստ նախագծի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը «ՎԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան հ.23/2 և հ.23/10 հասցեներում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 5196.16մ² ընդհանուր մակերեսով հողամասում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակը բնակելի շենքի կառուցումն է:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Լենինգրադյան փողոցի հարևանությամբ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան հ.23/2 և հ.23/10 հասցեներում գտնվող հողատարածքում: Գործունեության համար տրամադրվող հողամասը կառուցապատումից ազատ տարածք է: Կից հողամասերն են Լենինգրադյան փողոց, «ՎԱԼԵՄ»

պլազա և հասարակական նշանակության շինությունները: Տարածքը գտնվում է Լենինգրադյան և «ՆՈՅ» թաղամասի միջանկյալ հատվածում: Հարևանությամբ, տարածքի ետնամասում «ՎԱԼԵՄ» համալիրի ամայի հողամասն է:

Ծիծեռնակաբերդի խճուղի-Լենինգրադյան-Մոնթե Մելքոնյան տրանսպորտային հանգույցը տարածքից ընկած է 450 մ հեռավորության վրա, հյուսիս արևմտյան ուղղությամբ: Տարածքի հարևանությամբ, հյուսիս-արևմտյան հատվածում իրականացվում է «Լույսեր» թաղամասի կառուցապատման աշխատանքները: Տարածքն ազատ է քանդման ենթակա շենք շինություններից: Տարածքում բացակայում են քանդման ենթակա շենք շինությունները և ծառերը, մասամբ առկա են տարբեր տեսակի թափոններ:

Շինայուների հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ), նպատակ ունենալով ճշտելու գրունտների համապատասխանութունը նախնական հետազոտման արդյունքներին:

Վերամբարձ կռանի աշխատելու ժամանակ բեռի ուղղահայաց և հորիզանական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ և նշահարելով դեղին գույնով, շինարարության ընթացքում մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 30 ամիս կամ 2.5 տարի, որից 1 ամիս նախապատրաստական փուլ: Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, էքսկավատոր, աշտարակային վերամբարձ կռունկ, ավտոկռունկ, շարժական բետոնախառնիչ, ավտոբետոնախառնիչ, կոմպրեսորային կայան, եռակցման ապարատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղի շաղախ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնե կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են պատրաստի վիճակում մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքում հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ընդհանուր ծավալը կկազմի 16284 խ.մ որիից 3540 խ.մ կրկնակի կօգտագործվի: Հատկացվող հողամասում, համածայն տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ պահպանության ենթակա բերրի հողաշերտը բացակայում է: կօգտագործվի հետլիցքի համար,

իսկ գրունտի ավելցուկային՝ ծավալը 12744 խ.մ. դուրս կհանվի արտոնագրված աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված կարգով:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի (գրունտի) ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր, այլ ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Շենքերի կոյուղաջրերը հեռացվում են միասնական ինքնահոս համագարգով՝ կանգնակների միջոցով: Արտաքին կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել պոլիթիլենե Մ150-200մմ խողովակներով: Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր:

Կառուցապատման մակերեսը կազմելու է 2549.2մ² ներառյալ՝ սալվածքներ, ճանապարհներ, անջրանցիկ մակերեսներ: Համաձայն կառուցապատման նախագծի բազմաֆունկցիոնալ համալիրը նախագծվել է երկու ստորգետնյա և 14-16 վերգետնյա հարկերով մասնաշենքերի համար: Բազմաբնակարան համալիրը ներառում է բազմաբնակարան բնակելի շենքեր՝ A, B, C մասնաշենքերով, բնակելի հարկերի բարձրությունը՝ հատակից ընդունելով 3,30մ: Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները հետևյալն են՝ նկուղային/ կիսանկուղային հարկերում ապահովել բնակարանների թվաքանակի առնվազն 70%-80%-ին համապատասխան ավտոկայանատեղեր: Շենքի արտաքին հարդարումը նախատեսվում է իրականացնել կախովի երեսպատումով, արտաքին պատերը՝ ջերմամեկուսացված են: Արտաքին պատուհանները և դռները նախատեսված են հրակայուն և ամրակայուն ապակիներից: Ընդհանուր բակը բարեկարգվելու է կանաչապատ գոտիով, մայթերով, ճանապարհով, խաղահրապարակով:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու սառը ջրամատակարարման, կենցաղային կոյուղու և ներքին հակահրդեհային համակարգերով: Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ Լենինգրադյան փողոցով անցնող 500 մմ տրամագծի ջրագծից՝ 80մմ միացումով: Ջրագծի ջրի ճնշումը 0.5մթն., ջրամատակարարումը շուրջօրյա է: Ջրահեռացման միացման կետը տարածքի հարևանությամբ անցնող, գործող կոյուղագիծն է: Կոյուղու միացումն իրականացվելու է Լենինգրադյան փողոցով անցնող 1400 մմ տրամագծի կոյուղու կոլեկտորին՝ 200 մմ միացումով:

Բնակելի համալիրի գազամատակարարումը կատարվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:Ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվելու են անհատական կաթսաների միջոցով: Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում, ծառատունկ և կանաչապատում, որի համար կօգտագործվեն բացառապես տեղանքին բնորոշ, Երևանյան լանդշաֆտին համապատասխան բուսատեսակներ և

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՕՐԱՏՈՒՄ ՀԵՏՈ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT
02143169
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
COMMISSION OF EXPERTS
РА ЕРЕВАН

ծառատեսակներ: Նախագծով նախատեսված կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ, ծաղկասածիլ, ծառատունկ:

Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի մինչև 40%-ը /մոտ 2000.0մ² /մակերեսը/, մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները, ասֆալտապատումը և սպասարկման տարածքները: Քանի որ, տարածքում բացակայում է պահեստավորման ենթակա հողի բերրի շերտը, ուստի հողի բերրի շերտի հանման քանակ չի սահմանվում: Կանաչապատման համար նախատեսվում է նոր բուսահողի լիցք: Կանաչապատման աշխատանքների համար բուսահողի ձեռք բերումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ և կիրականացվեն դենդրոնախագծին համապատասխան: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է թույա, կաղնի, գնդաձև ակացիա, հացենի, թղկի, լացող ուռենի և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ: Այս տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ոռոգումն իրականացվելու է նոր կառուցվող ոռոգման ցանցի միջոցով: Ամբողջ հողամասը կունենա ոռոգման ավտոմատ համակարգ:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ հնարավոր են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված կլինեն հողային ու բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում անհրաժեշտ է՝

- բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը,
- ամբողջ շինարարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,
- թփերի և ծառերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանեցնել դենդրոնախագծի պլանին, ապահովել թփերի 90% կպչողականությունը,
- գործունեության ազդեցության ենթակա տեղամասերում նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ,
- օգտագործել փոշու տարածումը կանխող ցանցեր,
- շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERTISE CENTER OF RA
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, ինչն ապահովված կլին հոսակորուստների հավաքման համակարգով,

- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց և փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել առաջացած թափոնները՝ տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները և տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,

- վտանգավոր թափոնների հանձնումն այն ընկերություններին, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր,

- շինանյութերի ձեռք բերում՝ միայն լիցենզավորված մատակարարներից,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,

- խուսափել աղմկահարույց մեքենաների ու սարքավորումների օգտագործումից և պարտադիր ապահովել համապատասխան խլացուցիչներով:

Բնապահպանական կառավարման պլանում նախանշված են մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով իրականացվելու է կանոնավոր մոնիթորինգ, որի համար նախատեսված ծախսերը տարեկան կկազմեն 350.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. համաձայն նախնական հայտի, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:

Հայտը լրամշակվել է նաև տրված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են արտակարգ իրավիճակների նախարարությունը, կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը,

առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:

3. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:

5. Իրականացնել շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրային որոշման պահանջներին:

6. Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:

7. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

8. Ժամանակավոր պարսպապատել շինարարական հրապարակը, իսկ կառուցվող շենքերը և շինությունները պարփակել շինարարությանը համապատասխան բարձրության ցանցով:

9. Լվանալ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը:

10. Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է պատշաճ կերպով իրականացնել ջրցանման աշխատանքները՝ նվազագույնի հասցնելով փոշու առաջացումը:

11. Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների կամ կենսաբազմազանության տեսակների հետ: Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և այլ օբյեկտների

հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան հ.23/2 և հ. 23/10 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան